Մրցույթի հայտարարություն

ՀՀ Արմավիրի մարզի «Մրգաստանի Կ.Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) <<Հանրակրթության մասին>> օրենքի 12րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

1. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «Մրգաստանի Կ.Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում 2022 թվականի ապրիլի 19-ից մինչև մայիսի 10-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 15:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի մայիսի 24-ին՝ ժամը 15:00-ին, «Մրգաստանի Կ.Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ Արմավիրի մարզ, գ. Մրգաստան, 1-ին փ. 15 շենք:

Տեղեկությունների համար դիմել

Հեռախոս՝ 093-55-56-21

Էլ. փոստ՝ mrgastan@mail.ru: